

### ԱՆԳԵԼԻՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

## ՄԱՀՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության փոփոխությունների հիմքով հատուկ կարևորություն տրվեց մարդու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության հիմնահարցերին: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը դասակարգվեց սահմանադրական 7 հիմնական օրենքների շարքին և ՀՀ Սահմանադրության առանձին՝ 10-րդ գլուխը նվիրվեց Մարդու իրավունքների պաշտպանին:

Սահմանադրական փոփոխություններից բխող՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի ընդունմամբ ակնկալվում է կարգավորել Պաշտպանի՝ իր պարտականությունների կատարմանն անցնելու կարգը, հստակեցնել մարդու իրավունքների պաշտպանի ընտրության մեխանիզմը, Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության արդյունավետության բարձրացումը, Պաշտպանի և նրա աշխատակազմի անկախության երաշխիքների ամրապնդումը, ինչպես նաև մի շարք այլ դրույթներ:

*Հիմնարարներ- Սահմանադրություն, մարդու իրավունքներ, մարդու իրավունքների պաշտպան, սահմանադրական բարեփոխումներ, սահմանադրական օրենք:*

2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության փոփոխությունների հիմքով՝ հատուկ կարևորություն տրվեց մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության հարցերին: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը դասակարգվեց սահմանադրական 7 օրենքների շարքին և ՀՀ նոր Սահմանադրության առանձին՝ 10-րդ գլուխը նվիրվեց մարդու իրավունքների պաշտպանին, նրա և ապարատի գործունեությանը:

ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» հրամանագրով, կարևորելով իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման իրավական կառուցակարգերի հետագա կատարելագործումը, իշխանությունների լիարժեք հավասարակշռումը և հանրային կառավարման արդյունավետությունը, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններով սահմանված, ընդունման, փոփոխման և լրացման ենթակա օրենքների ցանկում ընդգրկվեց նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»

Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Օրենք), որի հիմնական նպատակը առկա իրավակարգավորումների համապատասխանեցումն էր Սահմանադրության փոփոխություններին:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության փոփոխություններով առանձին գլուխ է նվիրված մարդու իրավունքների պաշտպանին: Սահմանադրության փոփոխությունների 10-րդ գլխում դրույթեր են ամրագրված Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթների և լիազորությունների, մարդու իրավունքների պաշտպանի ընտրության, գործունեության երաշխիքների վերաբերյալ:

Օրենքի նախագծում ոչ միայն իրենց արտացոլումն են գտել սահմանադրական դրույթները, այլև Պաշտպանի նշանակման և լիազորությունների դադարման վերաբերյալ կատարվել են մի շարք այլ հստակեցումներ՝ կապված օրենքում առկա բացերի ու դրանց կարգավորման ուղղությամբ: Այդ առումով Օրենքի նախագծով հստակեցվել է Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության մեխանիզմը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության ընթացքում երկու անգամ Պաշտպանի պաշտոնը

www.journal.lawinstitute.am

որոշակի ժամանակահատվածով թափուր է մնացել, ինչը խոչընդոտներ է առաջացրել կառույցի գործունեության համար: Նախագծով սահմանվել է պաշտպանի ընտրությունների անցկացման համար նվազագույնը 50 օր ժամանակահատված՝ որոշ չափով երաշխիքներ ստեղծելով պաշտպանի պաշտոնը թափուր մնալու դեպքերի բացառման համար: Ավելին, սահմանվում է նաև, որ Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում մինչև նոր Պաշտպանի ընտրվելն ու պարտականությունների կատարման անցնելը Պաշտպանի աշխատակազմն ապահովում է իր բնականոն գործունեությունը:

Հստակեցվել է նաև Պաշտպանի՝ իր պարտականությունների կատարմանն անցնելու կարգը, այն է՝ Պաշտպանն իր պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում իր երդման արարողությունից հետո՝ նախորդ Պաշտպանի պաշտոնավարման ժամկետի ավարտման հաջորդ օրը: Եթե Պաշտպանի ընտրվելու պահին Պաշտպանի պաշտոնը թափուր է, ապա Պաշտպանն իր պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում երդման արարողությանը հաջորդող օրվանից:

Սահմանադրական փոփոխություններից բխող բավականին կարևոր և անհրաժեշտ կարգավորում է նախատեսվում՝ կապված մարդու իրավունքներին ու ազատություններին վերաբերող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերը նախքան ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի՝ ուղարկելու պայմանի հետ: Այն հնարավորություն է տալիս բոլոր այն դեպքերում, երբ Պաշտպանն իրեն հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում կամ սեփական նախաձեռնությանը սկսած հարցերի քննարկման ընթացքում պարզում է, որ դրանցում բարձրացված հարցերը նորմատիվ իրավական ակտերում լուծում չունեն համապատասխան կարգավորումների բացակայության կամ թերի կարգավորման պատճառով, ապա Պաշտպանը կարող է առաջարկություն ներկայացնել նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմնին՝ մատնանշելով իրավական ակտի կատարելագործման անհրաժեշտությունն ու սահմանները: Եվ որպես հետևանք, նախատեսված դեպքերում՝ Պաշտպանի առաջարկություններին չարձագանքելու կամ ընթացք չտալու դեպքում՝ Պաշտպանը կարող է հանդես գալ հրապարակային ելույթներով, ինչպես նաև՝ դրանք ներառել տարեկան հաղորդումներում և արտահերթ հրապարակային ելույթներում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Նախագծով տրվում են նաև գործնականում տեղ գտած մի շարք խնդիրների լուծումներ, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի 24-րդ հոդվածով նախատեսվում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի առկայությունը, որի գործառույթների իրականացման նպատակով Պաշտպանի կողմից աշխատակազմում ստեղծվում է Կանխարգելման ազգային մեխանիզմի առանձին ստորաբաժանում: Հիշյալ կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է ՍԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության կանխարգելման ազգային մեխանիզմին խորհրդատվական աջակցություն տրամադրելու նպատակով 2013 թվականի սեպտեմբերին կատարած այցի վերաբերյալ 15.10.2014 թվականին Հայաստանի Հանրապետությանը ներկայացրած զեկույցում:

Ենթահանձնաժողովն անդրադարձել էր Կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի ինստիտուցիոնալ ձևաչափին՝ առաջարկելով այն հստակեցնել՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքները»: Ձեկույցում շեշտադրվել է նաև պետության պարտավորությունը՝ Կանխարգելման ազգային մեխանիզմի համար իր կողմից սահմանված ձևաչափով և հաճախականությամբ այցեր իրականացնելու հնարավորության ապահովման, անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման վերաբերյալ, ինչը ենթադրում է նաև բավարար թվով անձնակազմի և նրանց անկախությունը երաշխավորելու անհրաժեշտություն: Առաջարկվել էր նաև, որ Կանխարգելման ազգային մեխանիզմը՝ իր ներկայիս և ապագա կառուցվածքով, համալրվի բավարար թվով աշխատակիցներով, որպեսզի նրա կարողությունը համապատասխանի մանդատով նախատեսված ազատության սահմանափակման վայրերի թվին, ինչպես նաև՝ բավարար լինի կատարելու իրեն վերապահված մյուս կարևոր գործառույթները՝ համաձայն Կամընտիր արձանագրության: Ենթահանձնաժողովը նաև առաջարկել է, որպեսզի ապահովվի ազգային մեխանիզմի փորձագետների պահանջվող ունակություններն ու մասնագիտական գիտելիքները, ներառյալ՝ բժշկական, հոգեբանական և այլ համապատասխան մասնագիտական հմտություններ: Սույն Օրենքի նախագիծը լիարժեք կարգավորում է բարձրացված խնդիրը:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Նախագծով առավել հստակեցվել են ազատության սահմանափակման այն վայրերը, որտեղ ազգային մեխանիզմը կարող է այցելություններ կատարել, միաժամանակ նախատեսվում է ազգային մեխանիզմի կողմից իրավասու մարմիններին և կազմակերպություններին առաջարկություններ ներկայացնելու իրավասություն՝ ազատության սահմանափակման ցանկացած վայրում գտնվող անձանց պահելու պայմանները բարելավելու, ինչպես նաև խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու նպատակով, ինչպես նաև ստանալու և պահանջելու տեղեկատվություն՝ ազատության սահմանափակման վայրում գտնվող անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի, նրանց պահելու պայմանների, լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցի վերաբերյալ:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Պաշտպանի գործառույթների և լիազորությունների շրջանակներում տեղ է գտել այնպիսի դրույթ, որով Պաշտպանը օրենքով սահմանված դեպքերում հետևում է կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքների և ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Միաժամանակ նախագծի կարգավորման առարկայի մեջ է ներառված Պաշտպանի հիշյալ գործառույթները, ինչն իր ամրագրումն է գտել մի շարք հոդվածներում՝ նախատեսելով Պաշտպանի լիազորությունը՝ քննարկելու այն կազմակերպությունների դեմ բերված բողոքները, որոնք խախտում են անձի իրավունքներն ու ազատությունները բժշկական սպասարկման, շրջակա միջավայրի, մշակույթի, սպառողների իրավունքների պաշտպանության և կրթության ոլորտներում: Բողոքում բարձրացված կամ սեփական նախաձեռնությամբ սկսված հարցերի ուսումնասիրման վերաբերյալ, ի թիվս այլ լիազորությունների, Պաշտպանն իրավասու է անարգել այցելել ցանկացած պետական և տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն՝ անկախ կազմակերպական կամ իրավական և սեփականության ձևերից, ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից և կազմակերպությունից՝ անկախ կազմակերպական, իրավական և սեփականության ձևերից, դրանց պաշտոնատար անձանցից և/կամ աշխատակիցներից պահանջել և ստանալ բողոքին

կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր, փաստաթղթեր, ինչպես նաև ստանալ աջակցություն այդ հաստատություններում իրականացվող այցերի ընթացքում, ստանալ քննարկվող հարցի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, որոնք Պաշտպանին են ներկայացվում անվճար և անարգել, ինչպես նաև օգտվել հիշյալ մարմինների ղեկավարների, պաշտոնատար անձանց և վարչակազմի մոտ անհետաձգելի ընդունելության իրավունքից:

ՀՀ Սահմանադրության 193-րդ հոդվածով ամրագրված կարգավորումներին համահունչ՝ Նախագծով անդրադարձ է կատարվում Պաշտպանի անձեռնմխելիության երաշխիքին, համաձայն որի՝ մարդու իրավունքների պաշտպանի վրա տարածվում է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիության դրույթը: Նախագծի 26-րդ հոդվածով նախատեսվում է, որ Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում և դրանից հետո չի կարող հետապնդել և պատասխանատվության ենթարկվել Պաշտպանի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնաձև կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում:

Պաշտպանին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հայց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության: Պաշտպանին չի կարելի ձերբակալել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Նախագծով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կարգավիճակի և երաշխիքների վերաբերյալ նույնպես կարգավորման առանձնահատկություններ են սահմանվել: Հստակ կարգավորում է նախատեսվում պաշտպանի աշխատակազմի կառուցվածքի դեպքում, նախատեսվում է նոր մարմին, այն է՝ փորձագիտական խորհուրդների ստեղծումը, հստակեցում պաշտպանի աշխատակազմի կառավարման ոլորտում Պաշտպանի գործառութային դերակատարությունը:

Նախագծում սահմանվել են նաև Պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման լիազորության իրականացման համար լրացուցիչ երաշխիքներ: Պաշտպանի կողմից սե-

փական նախաձեռնությամբ հարցի քննարկման լիազորության իրականացման հետ կապված իրավակիրառ պրակտիկայում որոշ դեպքերում տեղ են գտել տարաբնույթ մեկնաբանություններ, որոնց արդյունքում անհարկի խոչընդոտներ են ստեղծվել Պաշտպանի լիազորությունների իրականացման հետ: Հաշվի առնելով Պաշտպանի գործունեության ընթացքում նախկինում արձանագրված խնդիրները՝ տարբեր հաստատություններ անարգել մուտք գործելու հետ կապված, հստակեցվել է հաստատությունների ցանկը և համապատասխան լրացումներ են կատարվել հարակից օրենքներում: Հաշվի առնելով այն, որ գործնականում արձանագրվել են խնդիրներ նաև Պաշտպանի կողմից անհրաժեշտ նյութերին ծանոթանալու հետ կապված՝ կատարվել է համապատասխան դրույթների

հստակեցում, ընդլայնվել են նաև Պաշտպանին տեղեկատվություն և աջակցություն տրամադրող սուբյեկտների ցանկը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի ընդունմամբ՝ ակնկալվում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության արդյունավետության բարձրացում, Պաշտպանի և նրա աշխատակազմի անկախության երաշխիքների ամրապնդում, ինչպես նաև որոշ՝ ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթների հստակեցում:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. ՀՀ Սահմանադրություն:
2. ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա «Սահմանադրական բարեփոխումների իրավական սպառնալուծման գործընթացի կազմակերպման մասին» հրամանագիր:
3. ՀՀ օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»:
4. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծ:
5. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներ:
6. ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողովի 15.10.2014 թվականի զեկույց:

Ангелина Аванесян

Начальник юридического управления аппарата  
Управления по управлению государственным имуществом  
при правительстве Республики Армения,  
соискатель кафедры конституционного и  
муниципального права института политологии и права  
Российско-Армянского (Славянского) Университета

## Резюме

*Конституционные реформы в области прав человека*

Конституция Армении была принята в 1995 году всенародным голосованием. После вступления в силу Конституция Армении дважды подвергалась изменениям: в 2005 и в 2015 годах.

В результате конституционных изменений 2015 года Армения от полупрезидентской формы правления переходит к парламентской. Процесс перехода будет происходить поэтапно. Окончательно парламентская форма правления в Армении будет действовать со дня вступления в должность новоизбранного Президента РА, с 9 апреля 2018 года.

Среди важнейших нововведений конституционной реформы в Армении следует отметить следующие положения: достоинство личности ставится в основу всей системы прав и свобод человека. Достоинство рассматривается не только как конституционное право человека на уважение его чести и достоинства. В новой редакции Конституции Армении неотчуждаемое достоинство человека признается неотъемлемой основой его прав и свобод.

Согласно указу Президента РА от 10.02.2016 по организации юридических процессов связи с конституционными реформам, в перечень законов, которые будут приняты, изменены и дополнены, был включен также Закон об Омбудсмене как Конституционный закон Республики Армения.

В Конституции, принятый 6 декабря 2015 года отдельная глава посвящается правам и полномочиям человека. Были сделаны ряд изменений и уточнений о назначении и прекращении полномочий Уполномоченного по правам человека связи существующих пробелов и проблем в Законодательстве.

Также были внесены многочисленные уточнения и изменения в деятельность, в статус, в безопасность омбудсмана и его персонала.

**Ключевые слова:** Конституция, Уполномоченный по правам человека, Права человека, Конституционные реформы, Конституционный закон, Омбудсмен.

Angelina Avanesyan

Department of State Property Management by the Government  
Of the RA as the Head of Juridical Department  
Post-graduate student of the  
Russian-Armenian (Slavonic) University

## SUMMARY

*Constitutional reform in the field of human rights*

Constitution of Armenia was adopted in 1995 by popular vote. After the entry into force of the Constitution of Armenia have been changed twice: in 2005 and 2015. As a result of the constitutional changes in 2015 Armenia goes to a parliamentary form of government. The transition process will occur in phases. Finally, parliamentary form of government in Armenia will be valid from the day of inauguration of the newly elected President of the Republic of Armenia, on April 9, 2018.

Among the most important innovations of the constitutional reform in Armenia should note the following provisions: dignity of the person is put in the basis of the whole system of human rights and freedoms. The advantage is not only seen as a constitutional human right to respect for his honor and dignity. The new Constitution of Armenia recognizes the inalienable dignity of the human essential basis of its rights and freedoms.

According to the decree by the President of Armenia on 02.10.2016 on the organization of legal processes due to the constitutional reforms, in the list of laws to be adopted, amended and supplemented, it was included as the Law on the Ombudsman as the Constitutional Law of the Republic of Armenia.

The Constitution, adopted on 6 December 2015 a separate chapter is devoted to the rights and powers of man. a number of changes and clarifications on the appointment and termination of powers of the Ombudsman of communication gaps and problems in the Legislation of were made. numerous specification and Amendments were also made to the activities, status, in the security of the Ombudsman and his staff

**Keywords:** Constitution, Ombudsman, Human rights, Constitutional reforms, Constitutional Law.